ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

24 մարտի 2016թ. No 1953-Ա

ՍԼՈՎԵՆԻԱՅԻ «ԿՌԿԱ Դ.Դ., ՆՈՎՈ ՄԵՍՏՈ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՎԻՐՈԼԵՔՍ ԿԱԹԻԼԱՆԵՐԱՐԿՄԱՆ ԼՈՒԾՈՒՅԹԻ ԴԵՂԱՓՈՇԻ, ԱՑԻԿԼՈՎԻՐ (ԱՑԻԿԼՈՎԻՐ ՆԱՏՐԻՈՒՄ), ԴԵՂԱՓՈՇԻ ԿԱԹԻԼԱՆԵՐԱՐԿՄԱՆ ԼՈՒԾՈՒՅԹԻ, 250ՄԳ, ԱՊԱԿԵ ՍՐՎԱԿՆԵՐ (5)» ԴԵՂԻ A62228 ՍԵՐԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի N303-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության այլ արտադրանքի և կենսակտիվ սննդային հավելումների շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը, հետկանչի մասին ահազանգի ծանուցման և հետ կանչի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերը հաստատելու մասին» կարգի 3-րդ կետը, ինչպես նաև «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի եզրակացությունը դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում հաստատված սպեցիֆիկացիայի «նկարագրություն», «մեխանիկական մասնիկներ», «ջրի քանակ» կետերին չհամապատասխանելու հանգամանքը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Դադարեցնել Սլովենիայի «ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո» դեղագործական ընկերության արտադրության «Վիրոլեքս կաթիլաներարկման լուծույթի դեղափոշի, ացիկլովիր (ացիկլովիր նատրիում), դեղափոշի կաթիլաներարկման լուծույթի, 250մգ, ապակե սրվակներ (5)» դեղի A62228 սերիայի շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

1.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. «Վագա Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) Ապահովել սույն հրամանի առաջին կետում նշված դեղի A62228 սերիայի շրջանառության դադարեցումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և հետհավաքը՝ այդ մասին տեղեկատվություն տրամադրելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

4. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ.Թոփչյանին՝

1) սահմանված կարգով ապահովել հետհավաքման գործընթացի համակարգումը և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարություն:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ